ԼԻԱՆԱ ԿԱՌԼԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀԱՊՀ ընդհանուր տնտեսագիտության ամբիոն

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Տնտեսական ճգնաժամերի հարցը մշտապես եղել է տնտեսագիտական տարբեր ուղղությունների ներկայացուցիչների քննության առարկան: Եվ հատկանշական է, որ անգամ ժամանակակից տեսություններում նկատելի է նախորդ դպրոցների որոշ պոստուլատների աղերսները: Այս իմաստով տնտեսական ազատության պայմաններում առանձին տնտեսվարող սուբյեկտների և ամբողջ հասարակության շահերի ներդաշնակության վերաբերյալ դասականների գաղափարը իր որոշակի տեղն ունի ճգնաժամերի տեսությունների բացատրության հարցում: Ըստ էության մերժվում է տնտեսական ճգնաժամերի երևույթը՝ ելակետ ունենալով այն դրույթը, թե ապրանքները արտադրվում են փոխանակության համար, և ամեն մի արդյունքի արտադրությունն ինքնին ստեղծում է շուկա այլ ապրանքների համար[1]:

Դասականները ճգնաժամերի ժամանակ գների ընդհանուր անկումը բացատրում էին որպես փոխանակային հարաբերությունների փոփոխություն՝ ի օգուտ մի բարիքի՝ փողի, և ի վնաս այլ բարիքների՝ ապրանքների: Նման դատողությունների արդյունքում, որպես ճգնաժամերի պատճառ նշվում էր ժողովրդատնտեսական կյանքի բարդ մեխանիզմի պայմաններում արտադրությունը պահանջարկին հարմարեցնելու դժվարության հետ կապված ձեռնարկատերերի սխալները, ինչպես նաև վարկի չարաշահումն ու կործանումը: Փաստորեն, ժխտելով ընդհանուր գերարտադրության հնարավորությունը, ընդունվում էր միայն մասնակի գերարտադրության հնարավորությունը, մինչդեռ դրա քննադատները, մասնավորապես՝ Սիսմոնդին, Ռոդբերտուսը, Մարքսը, Մալթուսը, Չոմերսը և Կիրխմանը, հիմք ընդունելով բաշխման անհավասարաչափությունը, ինչպես նաև կապիտալի չափազանց ավելացումը, ճգնաժամերը կապում էին հենց ընդհանուր գերարտադրության հետ՝ դրանք դիտարկելով որպես կապիտալիստական կազմակերպության օրգանական արդյունք:

Արտադրության, սպառման, ինչպես նաև կապիտալի կուտակման միջև հարաբերությունների բավականին խոր վերլուծություն կատարել է Լոդերդելը: Ա.Սմիթին ուղղված քննադատությունում (որն ընդունում էր կապիտալի անսահմանափակ կուտակման հնարավորությունը՝ դրանով իսկ անջատելով արտադրությունը սպառումից) Լոդերդելը նշում է մասնավոր և ժողովրդական հարստության մեծությունների որոշման չափանիշների տարբերությունները: Չնայած նրան, որ Լոդերդելը չի առարկում ընդունված այն մտքին, որ կապիտալը կուտակվում է խնայողության շնորհիվ[2], սակայն ընդգծում է, որ ժողովրդական հարստությունը կազմված է այն ամենից, ինչը օգտակար և ցանկալի է մարդու համար, մինչդեռ մասնավոր անձանց հարստությունը որոշվում է նրանց ունեցվածքի արժեքով և, որ առավել կարևոր է, ընդհանուր առմամբ այն չի հարստացնում հասարակությանը: Այսինքն, բացի դրանց կազմի տարբերություններից, տարբեր են նաև դրանց ուղղությունները: Իսկ ինչ վերաբերում է ազգային տնտեսությունը հարստացնող միջոցներին, ապա այստեղ էլ մասնավորի հարստությունը, հասնելով հայտնի չափերի, կարող է միայն ունեցվածքը տեղափոխել հասարակության մի անդամից մյուսին՝ բնավ չավելացնելով ժողովրդական հարստությունը: Ըստ որում, տեղի է ունենում գնողունակ ուժի կենտրոնացում դեպի արտադրության միջոցների կողմը, ինչը, ի վերջո, պատճառ դառնալով գերարտադրության և վերջիններիս արժեզրկման, հանգեցնում է արտադրության կրճատմանն ու տնտեսական գործունեության թուլացմանը: Այսպիսով, Լոդերդելը ցույց է տալիս, որ հասարակությունը այնպես է կառուցված, որ մի մասի կուտակման մոլուցքի վնասը չեզոքացվում է մյուսների վատնողությամբ:

Առանձին ուշադրության է արժանի Ժ.Սիմոնդ դը Սիսմոնդու հայացքների քննությունը: Սիսմոնդին առաջին տնտեսագետն էր, որը լուրջ ուշադրության արժանացրեց տնտեսական ճգնաժամերի հարցը: Ա.Անիկինը հենց այս իմաստով է նկատում, որ «չնայած Սիսմոնդին նույնպես չկարողացավ լուծում տալ այդ հիմնախնդրին, բայց և այնպես, այն, որ նա հարցը բարձրացրեց տեսական մի նոր աստիճանի, նրան մի մեծ քայլով առաջ տարավ իր ժամանակակիցներից»[3]: Լինելով նաև պատմաբան և ամենայն ուշադրությամբ հետևելով ճգնաժամերի ընթացքին,

---

[1] Сэй Ж.Б., Трактат по политической экономии.- М.,1896, с.40-41.
[2] Селигмен Б.Б., Основные течения современной экономической мысли.- М., 1968, с.122.
[3] Аникин А.В., Юность науки.-М.,1985, с.271.

Սիսմոնդին 1815-1818 թվերի ճգնաժամերից հետո փաստեց, որ տնտեսական ճգնաժամերը օրգանապես կապված են ազատ մրցակցության վրա հիմնված տնտեսական կյանքի հետ՝ դրանով իսկ հակադրվելով առանձին տնտեսվարող անձանց և հասարակության շահերի ներդաշնակությունն ու ազատ մրցակցության առավելությունները քարոզող դասական ազատամտական դպրոցին: Նա գտնում էր, որ շուկաների գերլցվածությունը առևտրի ողջ պատմության մեջ ամենահաստատված փաստն է, և կարիք չկա պահանջարկը գերազանցող չափազանց մեծ արտադրությունը դիտարկել որպես չպլանավորված արտադրության հետևանք՝ տալով դրան մասնակի բնույթ: Այն ընդհանուր է բարիքների պահանջարկի նկատմամբ ընդհանրապես: Սպառողների լայն շրջանի համար նախատեսված գործարանային արտադրությունը, իր տրամադրության տակ ունի բավականին սահմանափակ շուկա: Սիսմոնդին դա պայմանավորում է այն հանգամանքով, որ արդյունքի իրացումը կախված է երկու գործոններից՝ գնորդների պահանջից և նրանց գնողունակ միջոցներից, որոնցից առաջինը շատ դանդաղ է զարգանում, իսկ երկրորդն էլ սահմանափակված է եկամուտներով: Եթե կապիտալիստական կազմակերպությանը մի կողմից՝ հատուկ է արտադրության արագ աճը՝ ելնելով արտադրության կատարելագործման հնարավորությունից, ապա մյուս կողմից՝ արտադրության մեքենայացումը, նպաստելով գործազրկության մեծացմանը և աշխատավարձի իջեցմանը, առաջ է բերում հասարակական եկամտի կրճատում: Փաստորեն ստացվում է, որ տեխնիկայի կատարելագործման շնորհիվ տեղի է ունենում հասարակական արտադրության գերազանցում նախորդ տարվա հասարակական եկամտի համեմատ, և քանի որ, ըստ Սիսմոնդու, մի տարվա հասարակական արդյունքը գնվում է նախորդ տարվա հասարակական եկամտով, ուստի դրանց միջև առկա անհամապատասխանությունը գնալով պիտի մեծանա, ինչն էլ տրամաբանորեն կհանգեցնի շուկաների գերլցմանը, գների անկմանը, ինչպես նաև թե՛ բանվորների և թե՛ ձեռնարկատերերի աղքատացմանը, մի խոսքով՝ ճգնաժամի: Ու թեև Սիսմոնդու եկամուտների տեսությունը քննադատվել է տարբեր տնտեսագետների կողմից, այնուհանդերձ, աննկատ չմնաց նրա այն միտքը, թե ժողովուրդները «կարող են սնանկանալ ոչ միայն այն բանից, որ չափազանց շատ են ծախսում, այլև այն բանից, որ չափազանց քիչ են ծախսում»[1]: Չնայած նրա հաճախ հանդիպող անհետևողական հետևություններին, Սիսմոնդին առաջինն ընդգծեց գերարտադրության ընդհանուր բնույթը և սերտ կապը բնակչության լայն զանգվածի սահմանափակ սպառման և տնտեսական ճգնաժամերի ծագման միջև:

Ճգնաժամերի տեսության պատմության մեջ որոշակի տեղ է պատկանում նաև Ռ.Մալթուսին: Արժեքի տեսության հարցում Լոդերդելի և Մալթուսի հայացքները շատ մոտ են միմյանց: Արժեքը, ըստ Մալթուսի, որոշվում է բացառապես պահանջարկով և առաջարկով: Վերլուծելով դրանց վրա ազդող գործոնները, նա կառուցում է մի շղթա, որում առաջարկի ավելացումը պահանջում է արտադրված բարիքների ճիշտ բաշխում, ինչը իր հերթին մեծացնում է պահանջարկը, հետևապես՝ նաև բարիքների արժեքը, որն էլ ստեղծում է հնարավորություն կուտակման համար: Ըստ որում, հարկ է նկատել, որ այդ շղթայի կարևոր «շարժիչ ուժը» նա համարում է սպառումը, ինչը, սերտ կապված լինելով բարիքների բաշխման հետ, կարգավորում է արտադրությունն ու կուտակումը: Այն դեպքում, երբ սպառման ձգտումը պահպանում է հավասարակշռությունը պահանջարկի և առաջարկի միջև, կուտակման չափից դուրս ձգտումն էլ վերջին հաշվով հանգեցնում է գերարտադրության: Փաստորեն, նա ևս մեկ անգամ հաստատում է արտադրության, սպառման և կուտակման միջև փոխադարձ այնպիսի կապի առկայությունը, որը որոշում է վերջիններիս հարաբերակցությունը տնտեսական կյանքի բնականոն ընթացքի համար: Մալթուսը առաջիններից մեկն էր, ով հակադրվեց իշխող այն կարծիքին, թե կապիտալիզմի կարևոր հիմնախնդիրը կապիտալի կուտակումն է, որն ապահովում է արտադրության աճ, իսկ պահանջարկի և իրացման հարցերում լուրջ դժվարություններ չկան, ինչպես նաև նա տնտեսագիտական միտքը սևեռեց իրացման հիմնախնդրին: Արտադրության և սպառման միջև հավասարակշռությունը պահպանելու համար և այդպիսով իրացման, իսկ, հետևաբար, նաև ճգնաժամերի հիմնախնդրի լուծման համար Մալթուսն առաջ քաշեց մի գաղափար, որը հետագայում բավականին մեծ դեր ունեցավ հակաճգնաժամային միջոցառումների մշակման հարցում: Այն էր՝ ոչ արտադրողական դասի անհրաժեշտությունը և սպառմանը վերջիններիս օժանդակման միջոցով՝ արտադրության խթանումը[2]: Ավելի քան հարյուր տարի հետո մակրոտնտեսագիտու-

[1] Симонд де Сисмонди Ж., Новые начала политической экономии.- М.,1937, Т.2, с.201.

[2] Туган-Барановский М.Н., Промышленные кризисы в современной Англии, их причины и влияние на народную жизнь.- СПб., 1894, с.388-393.

թյան հիմնադիր Ջ.Մ.Քեյնսը պիտի խոստովաներ, որ «էֆեկտիվ պահանջարկի» գաղափարները ինքը քաղել է Մալթուսից:

Ճգնաժամերի առաջացման Սիսմոնդու և Մալթուսի մտքերը իրենց արտացոլումն են գտնում Կիրխմանի տեսության մեջ, որի դատողությունները, թեև կառուցված են տեսական ավելի թույլ հիմքի վրա, սակայն իրենց ամբողջության մեջ ներկայացնում են «խրոնիկ գերարտադրության տեսության սրամիտ սխեմա»: Այն հետևյալն է. եկամուտների անհավասարաչափ բաշխման հետևանքով բանվոր դասակարգը, ստանալով հասարակական արդյունքի աննշան մասը, ի վիճակի չէ ընդլայնելու արտադրությունը: Մյուս կողմից՝ հողային և կապիտալային ռենտա ստացողները, չնայած առկա հնարավորությանը, գերադասում են կուտակել իրենց միջոցները և սեփական եկամուտների ավելացման ակնկալիքով ներդնել արտադրության մեջ, որի արդյունքները, սակայն, վերը նշված պատճառներով, մնալու են չիրացված: Ուստի կուտակման ձգտումը և անբավարար իրացումը պատճառ են դառնում գերարտադրության[1]: Ճգնաժամերի կապը բաշխման անհավասարությունից առավել տեսանելի է Ռոդբերտուսի հայացքներում, որոնց առանցքային միտքն այն է, որ գերարտադրության ընդհանուր պարբերական ճգնաժամերի պատճառը պետք է փնտրել ոչ թե ձեռներեցների սխալներում կամ դրամական ու վարկային շրջանառության ոլորտներում, այլ հողի և կապիտալի մասնավոր սեփականության և ազատ մրցակցության վրա հիմնված տնտեսության կազմակերպությունում: Հողային ռենտան և շահույթը Ռոդբերտուսին ներկայանում են որպես բանվորի չվարձատրված աշխատանքի արդյունք, քանի որ «եթե աշխատանքի արտադրողականությունն այնքան մեծ է, որ բանվորը, անհրաժեշտ կենսամիջոցներից բացի, կարող է արտադրել ևս շատ այլ սպառողական բարիքներ, ապա հողի և կապիտալի մասնավոր սեփականության առկայության պայմաններում այդ ավելցուկը դառնում է ռենտա, այսինքն՝ առանց աշխատանքի յուրացվում է այլ անձանց կողմից»[2]: Այսինքն, հասարակական արդյունքում աշխատավոր դասակարգի մեծ մասի ունեցած բաժնի չափի և իր աշխատանքի արտադրողականության միջև առկա է բացասական կախվածություն, ուստի բնակչության մեծ մասի գնողունակ ուժի և հասարակական արտադրողականության միջև առաջ է գալիս անհամապատասխանություն: Եվ չնայած նրան, որ վերջին հաշվով գնողունակ ուժի ընդհանուր չափի փոփոխություն տեղի չի ունենում, այնուհանդերձ, վերջինիս ուղղության փոփոխությունը փոխում է պահանջարկի կազմը, այն դեպքում, երբ արտադրության կազմը մնում է անփոփոխ: Հետևաբար, Ռոդբերտուսը հանգում է այն մտքին, որ բաշխման տվյալ պայմանների դեպքում աշխատանքի արտադրողականության անընդհատ մեծացումը առաջ է բերում պահանջարկի և առաջարկի անհամապատասխանություն, ինչն էլ հանգեցնում է սպառման և արտադրության լճացման, հետևաբար՝ նաև ճգնաժամերի, որոնցից կարելի է խուսափել միայն բաշխման այնպիսի կարգի դեպքում, երբ աշխատանքի ցանկացած արտադրողականության պայմաններում բնակչության տարբեր շերտերի բաժինը հասարակական արդյունքում կկազմի անփոփոխ մեծություն:

Վերակապիտալացման ձգտման և դրան հետևող ընդհանուր գերարտադրության գաղափարն ընդունողների շարքից կարելի է առանձնացնել նաև անգլիացի և ամերիկացի տնտեսագետներ Մոֆֆատին, Կրոկերին, Մոմերին և Գոբսոնին, որոնց հայացքները զուգահեռներ են գծում Լոդերդելի, Մալթուսի, Սիսմոնդիի հայացքների հետ: Հիմքում ունենալով դասական դպրոցի կապիտալի տեսության Ջ.Ստ.Միլի քննադատությունը[3], նրանք ընդգծում են, որ արտադրության շարժառիթը ոչ միայն սպառման ցանկությունն է, այլև կուտակման մեծ ձգտումը: Եվ երբ հասարակության մեջ կուտակման ձգտումը գերազանցում է սպառման տվյալ պայմաններում դրա անհրաժեշտության չափը, վերակապիտալացումը դառնում է անխուսափելի, և ըստ որում՝ չափից ավելի կուտակումը հանգեցնում է ոչ թե հասարակական կապիտալի կազմի մեծացմանը, այլ սեփականատերերի միջև դրա բաշխման փոփոխությանը, ինչին էլ հետևում են թե՛ սպառողական բարիքների և թե՛ կապիտալի ընդհանուր գերարտադրությունը և արտադրական գործընթացի խաթարումը: Ինչպես ակներև է, սույն արծարծումները, ըստ էության, հեռու չեն Կիրխմանի նմանօրինակ սխեմայից:

Սույն ակնարկը վկայում է նախորդ ու արդի տեսությունների ինչ-ինչ նստվածքների մասին, որոնք հարստացնում են ճգնաժամերի հաղթահարման տնտեսագիտության լաբորատորիայի հնարավորությունները:

---

[1] Бунятян М.А., Экономические кризисы.- М.,1915, с.XVII-XVIII.

[2] Родбертус К., К познанию нашего государственно-хозяйственного строя. Пять теорем.- М.,1935, с.115.

[3] Милль Дж.С., Основы политической экономии.- М.,1980, Т.1, с.163-168.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԼԻԱՆԱ ԿԱՌԼԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀԱՊՀ ընդհանուր տնտեսագիտության ամբիոն

Համառոտագիր

«Ժամանակակից աշխարհում տնտեսական ցիկլերին նայում են գրեթե նույն ձևով, ինչպես որ հին եգիպտացիները Նեղոսի հորդացումներին: Այս երևույթը կրկնվում է ժամանակի որոշակի ընդմիջումներով, մինչդեռ դրա իրական պատճառները մնում են թաքնված»: Հոդվածում արծարծվող ակնարկը վկայում է տնտեսական ճգնաժամերի նախորդ և արդի տեսությունների ինչ-ինչ աղերսների մասին, որոնք հարստացնում են ճգնաժամերի հաղթահարման տնտեսագիտության լաբորատորիայի հնարավորությունները: Խոսքը տնտեսական գիտության հետագա գիտականացման մասին է:

Բանալի բառեր. *ճգնաժամ, գերարտադրություն, գնողունակություն, ազատ մրցակցություն, կապիտալի կուտակում, վարկի չարաշահում, կապիտալիստական կազմակերպություն, հավասարակշռություն, հակաճգնաժամային միջոցառումներ, դրամական շրջանառություն, արտադրության լճացում, վերակապիտալացում:*

ЭКОНОМИЧЕСКИЕ КРИЗИСЫ: ИСТОРИЧЕСКИЙ ОЧЕРК ТЕОРИЙ

ЛИАНА КАРЛЕНОВНА АРУТЮНЯН, *к.э.н,.доцент*
Кафедра общей экономики Национального политехнического университета Армении

Аннотация

«В современном мире на экономические циклы смотрят примерно так же, как древние египтяне – на разливы Нила». Этот процесс с течением времени повторяется через определенный интервал времени, в то время как его истинные причины остаются скрытыми. Приведенная в статье метафора свидетельствует о взаимосвязи между прошлыми и современными теориями об экономических кризисах, которые обогащают возможности лаборатории экономической науки по преодолению кризисов. Речь идет о дальнейшем «онаучивании» экономической теории.

Ключевые слова: *кризис, перепроизводство, покупательная способность, свободная конкуренция, накопление капитала, злоупотребление кредитом, капиталистическая организация, равновесие, антикризисные меры, денежное обращение, стагнация производства, капитализация.*

ECONOMIC CRISES: HISTORICAL OUTLINE OF THEORIES

LIANA KARLEN HARUTYUNYAN, *Candidate of Sciences (Economics), Associate Professor*
Chair of General Economics, National Polytechnic University of Armenia

Abstract

“In the modern world, economic cycles are considered and/or viewed like the floods of the Nile wereviewed by ancient Egyptians. This phenomenon occurs from time to time, while its real cause-roots are still not explicit.” The outline provided in the article proves that earlier and current theories of economic crises are interrelated and give broad evidence that could enrich the studies on crisis response practices. And many things based on that evidence could be structured,formalized and incorporated into economic theory.

Keywords: *Crisis, overproduction, capacity to consume, free competition, capital stock, credit abuse, equilibrium, crisis response measures, money circulation, production stagnation.*